

Թերթը այսպէս կը վերջացնէ իր յուզիչ քրոնիկը .

«Այդ իմպոզանտ (մեծ, տպաւորիչ) ցոյցը, որուն կը մասնակցէին մօտ քսան հազար մարդ, անջնջելի տպաւորութիւն պիտի թողնէ Նիցցայի մէջ եւ ահապիւն անդրադարձումներ պիտի ունենայ ամբողջ Ֆրանսայում ու Ռուսաստանում» . . .

Դա իրօք ցոյց մըն էր ոչ միայն ի պատիւ մեծ զօրավարի, այլ եւ ընդդէմ Պետերբուրգի կառավարութեան . . .

* * *

Լօրիսի մասին բաւական դրուեցաւ վերջերս նոյնիսկ «Հայրենիք»ի մէջ (տես ռուս հրատարակաչի Կոնիի յօդուածը, «Հայրենիք» ամսագրում) :

Շատ չհամարենք : Հրէայ հայրենասէրները անդլիերէն լեզուով հրատարակեր են իրենց Jewish Encyclopedia-ն (Հրէական Հանրագիտարան), ուր կը պատմուի իրենց բազմաթիւ ցեղակիցներու կեանքն ու գործը, թէպէտ եւ անոնք նուիրուած են եղեր օտար, մեծ մասամբ արեւմտեան ազգերուն : Մենք չենք կըրնար առ այժմ նման գործ մը հրատարակել :

Բայց դէթ մեր գրականութեան մէջ պարտաւոր ենք արժէքաւորել մեր սեփական ցեղի այն ծնունդները, որոնք անուն ու հռչակ են հաներ օտար այլ եւ այլ երկիրներու մէջ, երբեմն նոյնիսկ ամբողջ աշխարհում : Լօրիս-Մէլլիքով մը, որ իր արտակարգ տաղանդով

կատարեց ամենէն յուզիչ ու պաթետիկ վերելքը, եւ դարձաւ ատեն մը համաշխարհային ուշադրութեան կենտրոն . Նուպար փաշա մը, որ եղաւ նոր Եգիպտոսի հոյակապ ստեղծագործներէն մէկը . Լազարեվ մը, Տէր Ղուկասով մը, որոնց ռազմական սխրագործութեանց արձագանգները երբեմն կը թնդացնէին ծայրէ ի ծայր Կովկասն ու Ռուսաստանը . Եփրեմ մը, որու կեանքի ու գործունէութեան երկրորդ շրջանը նուիրուեցաւ Պարսկաստանին, — շրջան մը, ուր ան «Արեւելքի Գարիբալդի» տիտղոսը վաստակեց իր դիւցազնական ճակատամարտներով . Ալվազովսկի մը, որ վաղուց Ռուսաստանի եւ աշխարհի պարծանքներէն է . Վարդան Մախոխեան մը, որ Եւրոպայի մէջ հաստատուած, կը սպասաւորէ համաշխարհային արուեստին եւ իր դժայլելի վրձինով Միջերկրականի դիւթական փոթորիկումները կը յաւերժացնէ, օտար պաշտօնակիցներու նախանձը շարժելով . Գրիգոր Ջանշեան մը, որ ռուսական հրատարակագրութեան առաջնակարգ դէմքերէն է . Միքայէլ Առլէն մը, որ իր գրչով կը խիզախէ ճամբայ մը հարթել եւ հռչակ ստեղծել Եփրատի հայրենիքում, — ատոնք բոլորը հայ ցեղային հանճարի, հայ ստեղծագործող իմացականութեան պերճախօս վիպաներն են օտար հորիզոններու մէջ եւ իրենց որդեգրած հայրենիքին կամ աշխարհին ծառայելով՝ յայտնի չափով մը կը ծառայեն եւ իրենց փոքրիկ ու հարագատ հայրենիքին . . .

